ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.6-2-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթին ներկայացվել 5 (հինգ) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- **«Բրենդոն»** ՍՊԸ-ի (13,457,950.0 (տասներեք միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար ինը հարյուր հիսուն) (այդ թվում՝ 2,961,590.0 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամ),
- **«ՍԱՆ-ՍԱՌԱ»** ՍՊԸ-ի (14,699,400.0 (տասնչորս միլիոն վեց հարյուր իննսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Թայմ»** ՍՊԸ-ի (14,930,000.0 (տասնչորս միլիոն ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Արսեն Ավդալյան»** ԱՁ-ի (11,440,000.0 (տասնմեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Նիկոն»** ՍՊԸ-ի (15,000,000.0 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 5 (հինգ) կազմակերպության՝

- **«Բրենդոն»** ՍՊԸ-ի,
- **«ՍԱՆ-ՍԱՌԱ»** ՍՊԸ-ի,
- **«Թայմ»** ՍՊԸ-ի,
- **«Արսեն Ավդալյան»** ԱՁ-ի,
- **«Նիկոն»** ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Բրենդոն»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- Armeps համակարգի պիտանելիության բաժնում ներկայացված ծրագրի առաջարկը թերի է,
- ներկայացված չէ կազմակերպության պորտֆոլիոն, կցված է միայն մի քանի լուսակար և մեկ վիդեո,
- կազմակերպության փորձը մասնագիտացված լուսանկարահանման ու տեսանկարահանման չէ, այլ մարքեթինգի ու բրենդինգի, որի մեջ մի պայմանագրում է հղում կատարվում, որ պետք է լուսանկարներ և տեսանյութեր արվեն ու տարածվեն,

- ըստ ներկայացված ինքնակենսագրականների՝ թիմում առկա է մեկ լուսանկարիչ, սակայն ֆինանսական նախահաշվում նշված են համապատասխան մասնագետներ,

- ծախսերի նախահաշվում առկա չէ տեղեկատվություն՝ իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի, գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի վերաբերյալ,

- **«ՍԱՆ-ՍԱՌԱ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- ներկայացված չէ կազմակերպության պորտֆոլիոն,

- առկա չէ կազմակերպության 3 տարվա փորձը հավաստող տեղեկատվություն՝ կցված են 2025-2026թթ. պայմանագրեր,

- ծախսերի նախահաշվում առկա չէ տեղեկատվություն՝ իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի, գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի վերաբերյալ,

- Ծրագիրը ամբողջությամբ չի համապատասխանում 2.4.1 պահանջներին,

- **«Թայմ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝

- չի համապատասխանում հրավերի 2.4.1 կետի պահանջներին,

- ծախսերի նախահաշվում առկա չէ տեղեկատվություն՝ իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի, գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի վերաբերյալ,

- **«Արսեն Ավդալյան»** ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը չի դիտարկվել՝

-հաշվի առնելով 2003 թվականի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եվ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937 որոշման 1-ին մասի 1 կետը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին դրամաշնորհների հատկացման գործընթացի մասնակից են՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները:

- **«Նիկոն»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- առկա չէ կազմակերպության պորտֆոլիոն:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 5 (հինգ) կազմակերպության՝

- **«Բրենդոն»** ՍՊԸ-ի,
- **«ՍԱՆ-ՍԱՌԱ»** ՍՊԸ-ի,
- **«Թայմ»** ՍՊԸ-ի,
- **«Արսեն Ավդալյան»** ԱՁ-ի,
- **«Նիկոն»** ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____